



**Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ
PEDAGOGY AND SOCIAL SCIENCES**

2 (67)

**Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2024

**ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**ԱՆՆԱ Լ. ՄԻՆԱՍՅԱՆ
ԱՐՈՒՄՅԱԿ ԵՂԻՊՉԱՐՅԱՆ**

Համառոտագիր

Գերակտիվության համախտանիշը ամենատարածված զարգացման խանգարումներից է: Հոդվածում ներկայացված են դպրոցականների գերակտիվության համախտանիշի հաղթահարման ուղիները: Գերակտիվության համախտանիշի ախտանիշներն են դպրոցականների ուշադրության պակասը, բարձր շարժողական ակտիվությունը և հուզական անկայունությունը: Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները դժվարանում են կենտրոնացնել ուշադրությունը դասի ժամանակ, կառավարել իրենց վարքը և անդադար շարժվում են: Գերակտիվությամբ պայմանավորված ախտանիշները ժամանակի ընթացքում ավելի են խորանում և կարող են խնդիրներ առաջացնել դպրոցում, տանը կամ հասակակիցների հետ հաղորդակցվելիս: Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների զարգացման առանձնահատկություններին և այն խնդիրներին, որոնց հետ նրանք կարող են առերեսվել: Ներկայացված են գերակտիվության համախտանիշի հաղթահարման ուղիները, ինչպես նաև տարբեր առաջադրանքներ, վարժություններ և խաղեր, որոնք կարող են ներառվել ուսումնական գործընթացում, նպաստելով ուսուցչի և գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների միջև համագործակցությունը:

Հիմնաբառեր՝ *գերակտիվության համախտանիշ, դպրոցականներ, զարգացման առանձնահատկություններ, գերակտիվության հաղթահարման ուղիներ*

Ներածություն

Գերակտիվությունը կենտրոնական նյարդային համակարգի աննշան օրգանական փոփոխությունների հետևանքն է, որի պատճառով դպրոցականների մոտ նկատվում են տարբեր նյարդային բնույթի դրսևորումներ, որոնք արտահայտվում են վարքագծի և խոսքի խանգարումներով: Գերակտիվ երեխաների մոտ դեռ վաղ տարիքից նկատվում են քնի խանգարումներ, նրանք դյուրագոգիք են, ունեն բնականոն զարգացման խանգարումներ: Գերակտիվ երեխան խոսքը յուրացնելու և իրեն շրջապատող միջավայրը ընկալելու ավելի քիչ հնարավորություններ ունի, քան իր հասակակիցները: Գերակտիվությունը արտահայտվում է նաև ուշադրության պակասով, ինչն ազդում է երեխայի խոսքի զարգացման վրա:

Գերակտիվ դպրոցականներին «Էներգիայի կծիկ» են անվանում: Նրանք դժվարությամբ են կառավարում իրենց վարքն ու զգացմունքները, չեն կարողանում կենտրոնացնել իրենց ուշադրությունը, ինչի արդյունքում ունենում են բազմապիսի խնդիրներ: Գերակտիվ դպրոցականների կյանքը պետք է առավելագույնս կազմակերպված լինի: Քանի որ գերակտիվ երեխաների ինքնակազմակերպման հմտությունները թույլ են արտահայտված, անհրաժեշտ է զարգացնել նրանց ինքնուրույնությունը, նպաստել ուշադրության կենտրոնացմանը, օգնել շտկել վարքագիծը, հաղթահարել հուզական անկայունությունը: Գերակտիվ դպրոցականները աչքի են ընկնում իրենց յուրօրինակ վարքով, ճարպկությամբ, անկանխատեսելիությամբ և անկառավարելիությամբ: Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատելիս անհրաժեշտ է իմանալ նրանց *առանձնահատկությունները*:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսուցիչների կողմից գերակտիվության հաղթահարման ուղիների իմացությունը և կիրառումը շատ կարևոր է, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել գերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտների ակադեմիական առաջադիմությունը, նպաստել նրանց կողմից գիտելիքների յուրացմանը և կարողությունների ձևավորմանը, ապահովելով երեխաների բնականոն զարգացումը:

Հոդվածի **նպատակն** է՝ ուսումնասիրել դպրոցականների գերակտիվության համախտանիշի հաղթահարման ուղիները:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել դպրոցականների գերակտիվության համախտանիշի առաջացման պատճառները և դրա առանձնահատկությունները
- քննության առնել գերակտիվության համախտանիշ ունեցող և ակտիվ դպրոցականների տարբերությունները
- վեր հանել դպրոցականների գերակտիվության արդյունքում ծագած խնդիրները
- վերլուծել ուսուցչի աշխատանքը գերակտիվ դպրոցականների հետ

Հետազոտության մեթոդներ. հետազոտության ընթացքում կիրառվել են գրականության ուսումնասիրության, վերլուծության, համադրման մեթոդները:

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների զարգացման առանձնահատկությունները

Գերակտիվությունը նյարդաբանական խնդիր է, որի ախտորոշումը պետք է հաստատվի նյարդաբանի կողմից, սակայն դրա ախտորոշման համար հատուկ հետազոտություններ գոյություն չունեն: Գերակտիվությունը նաև մանկավարժական խնդիր է: Գերակտիվությունը հաստատվում կամ հերքվում է դպրոցականի վարքի դիտարկման միջոցով: Երեխաների մոտ գերակտիվության

առաջացման պատճառներից կարող են լինել ծանր ընթացող հղիությունը, վաղաժամ և բարդ ծննդաբերությունը, վաղ տարիքում երեխաների թունավորումները: Այն նաև կարող է փոխանցվել ժառանգաբար: Գերակտիվությունը կարող է լինել մարմնի մեծ քաշ ունեցող նորածնի մոտ՝ ծննդաբերական վնասվածքի, ինչպես նաև տևական կամ, ընդհակառակը, արագընթաց ծննդաբերության ժամանակ ստացված վնասվածքի արդյունքում (Заваденко, 2019):

Գերակտիվության պատճառ է հանդիսանում աննշան ուղեղային վնասվածքը, որը հնարավոր է հաղթահարել և շտկել մանկավարժիական ներգործությունների շնորհիվ, սակայն անուշադրության մատնելու հետևանքով երեխայի մոտ ավելի մեծ տարիքում կարող են առաջանալ տարբեր հոգեբանական խնդիրներ և հիվանդություններ, որոնց բուժումը դժվար է, երբեմն՝ անհնար (Шевченко, 1997, էջ 52) :

Գերակտիվությունը շատ հաճախ հանդիպող խանգարում է և արտահայտվում է

1.Բարձր շարժողական ակտիվությամբ

2.Ուշադրության կենտրոնացման պակասով

3.Հուզական անկայունությամբ

Բարձր շարժողական ակտիվություն ունեցող դպրոցականները մշտական շարժման մեջ են գտնվում, անդադար շարժում են ձեռքերը և ոտքերը, դժվարանում են հանգիստ նստել և լսել դասը: Հատկանշական է, որ նրանք հոգնած ժամանակ ավելի շատ են շարժվում:

Ուշադրության պակաս ունեցող դպրոցականները որևէ հանձնարարություն կատարելիս թույլ են տալիս բազմաթիվ սխալներ և բացթողումներ, խուսափում են տևական մտավոր ջանքեր պահանջող աշխատանքներից, ունեն դասի, գրույցի կամ ընթերցելու վրա կենտրոնացման դժվարություններ, հաճախ կորցնում են իրեր, մոռացկոտ են:

Հուզական անկայունություն ունեցող դպրոցականները անփույթ են, անհամբեր, զգայուն, դժվարանում են հանգիստ լսել, հաճախ ընդհատում են գրույցը, դասը, շտապում են պատասխանել մինչև հարցն ավարտին հասնելը, չեն սպասում իրենց հերթին:

Գերակտիվ դպրոցականներին բնորոշ են Էմոցիոնալ անկումներ, գրգռվածություն, լարվածություն, վախ, անհանգստություն, վատ ինքնազգացողություն և տրամադրություն, մեղքի զգացում: Աններդաշնակության զգացողությունները մշտապես ուղեկցում են գերակտիվ դպրոցականներին՝ պայմանավորված լինելով ուղեղի որոշակի խանգարումով: Միևնույն ժամանակ գերակտիվ դպրոցականները ոգեշնչվող են, եռանդուն, անմիջական, տաղանդավոր և ստեղծագործող, ինչպես նաև նվիրված են սիրելի մարդկանց (Կատինյան, Օհանյան, Ամտոնյան, 2017, էջ 76):

Հաճախ ակտիվ դպրոցականներին կարող են անվանել գերակտիվ, բայց ակտիվ լինելը չի նշանակում ունենալ գերակտիվության համախտանիշ: Այս երկուսի հիմնական



տարբերությունը կայանում է նրանում, որ ակտիվ դպրոցականները կարող են կառավարել իրենց վարքը, բայց չեն ցանկանում, իսկ գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները ցանկանում են կառավարել իրենց վարքը, բայց չեն կարողանում:

Ակտիվ և գերակտիվ դպրոցականների միջև տարբերությունները հետևյալն են՝

Գերակտիվ դպրոցականներ

Ակտիվ դպրոցականներ

Ակտիվ դպրոցականները գիտակցում են, ինչպես պետք է



դրսևորել իրենց տարբեր միջավայրներում: Նրանք անցանկալի վարք են դրսևորում, երբ վստահ են, որ անպատիժ են մնալու: Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները չեն գիտակցում իրենց արարքների լրջությունը և չեն կարողանում կանխատեսել դրանց հետևանքները, նրանք կարող են իրենց վնաս պատճառել:

Դպրոցականների գերակտիվության արդյունքում ծագած խնդիրները

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները կարող են վարքի վերլուծության, մտածողության, հիշողության և ինքնակառավարման ոլորտներում ունենալ զանազան խնդիրներ: Մասնագետները փաստում են, որ գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները շատ հաճախ ընդունակ են և խելացի, սակայն ինքնաարտահայտման և զարգացման համար նրանց անհրաժեշտ են հատուկ պայմաններ: Հատկապես կրտսեր

դպրոցական տարիքում գերակտիվ դպրոցականների հետ աշխատիս շատ կարևոր է հաշվի առնել նրանց առանձնահատկությունները: Կարևոր է, որ դպրոցականները դժվարությունները հաղթահարեն, չլարվեն և չկորցնեն ուսման հանդեպ հետաքրքրությունը: Նախ և առաջ գերակտիվ դպրոցականները պետք է զարգանան բարենպաստ պայմաններում: Գերակտիվ դպրոցականների առօրյան հստակ պլանավորված պետք է լինի: Ցանկալի է, որ կրտսեր դպրոցական տարիքում գերակտիվ դպրոցականները կրթվեն անհատական ծրագրերով, որտեղ հաշվի կառնվեն նրանց առանձնահատկությունները: Գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաները չեն գիտակցում իրենց արարքների լրջությունը և չեն կարողանում կանխատեսել դրանց հետևանքները: Նրանք արկածներ չեն փնտրում, այլ պարզապես չեն գիտակցում հարցի լրջությունը:

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների մոտ առաջանում են ինքնագնահատականի անկման խնդիրներ, նրանք իրեց մեղավոր են զգում, կարծում են, թե ընդունակ չեն: Գերակտիվ դպրոցականների առաջադիմության խնդիրները հիմնականում առաջանում են ուշադրության պակասի հետևանքով: Երբ նրանք կենտրոնացած են, կարճ ժամանակահատվածում կարող են կատարել իրենց առջև դրված խնդիրները:

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները ունենում են խնդիրներ հասակակիցների հետ: Դպրոցահասակ երեխաները խուսափում են ընկերանալ նրանց հետ, քանի որ նրանք տարբերվում են իրենցից: Գերակտիվ դպրոցականները հանգիստ չեն կարողանում նստել, անընդհատ հարցեր են տալիս, ձեռքից հաճախ իրեր են զցում: Դասընկերները հաճախ ծաղրում են նրանց: Այսպիսի խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է մանկավարժների գրագետ մոտեցում: Կրտսեր դպրոցական տարիքում ցանկալի է աշակերտների հետ միասին մշակել խրախուսանքի և պատժի սխեմա, որտեղ նշվում է, թե որ արարքներն են խրախուսանքի արժանի, որը՝ պատժի: Երախաները առաջարկում են իրենց տարբերակները: Վերջում ցուցակը ամրացնում են երևացող տեղում: Այս եղանակով հնարավոր կլինի աշակերտի ուշադրությունը կենտրոնացնել խնդիրների վրա, տարբերել լավը վատից, ճիշտը՝ սխալից, հետագայում նման խնդիրները բացառելու համար (Лютова, Мониha, 2001, с. 35):

Գերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտների մոտ մանր մոտորիկյան թույլ է զարգացած, ինչի հետևանքով նրանք անփույթ են, հաճախ ձեռքից իրեր են զցում, պատահաբար շրջում են սեղանին դրված իրերը: Այս խնդիրները առաջանում են այն պատճառով, որ երեխան չի կարողանում կենտրոնանացնել միաժամանակ տեսողությունը և շարժումները: Կան հատուկ խաղեր և վարժություններ, որոնք ուղղված են երեխաների մանր մոտորիկյալի զարգացմանը: Մասնագետների աշխատանքը երեխաների մանր մոտորիկյալի զարգացման ուղղությամբ պարտադիր է: Այսպիսի

խնդիրները ավելի հեշտ են լուծվում կրտսեր դպրոցական տարիքում (Альтхерр, Вельфль, 2004, էջ 160):

Գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաները տարատեսակ խնդիրներ են ունենում իրենց հասակակիցների և ծնողների հետ, նրանց մոտ հաճախ գայրույթ է առաջանում, և նրանք դառնում են ավելի անկառավարելի:

Գերակտիվ դպրոցականների հետ աշխատելիս այսպիսի խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է սովորեցնել նրանց արտահայտել գայրույթը, խոսել: Չայրույթի արտահայտման ամենայլով տարբերակը այն է, երբ երեխաները հանգիստ առում են, որ գայրացած են՝ նշելով պատճառները: Պետք է սովորեցնել գերակտիվ դպրոցականներին խոսել իրենց խնդիրների մասին ծնողներին հետ: Ինչքան շատ գայրույթը արտահայտվի բառերով, այնքան քիչ կլինի ցանկություն ստելու, ծիւելու կամ այլ բացասական ձևերով արտահայտվելու: Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատելիս պետք է սովորեցնել նրանց արտահայտել գայրույթը՝ օգտվելով անվտանգ առարկաներից: Կիրառվում են տարբեր խաղեր. ջրային խաղալիքներ, բարձ, որին կարելի է հարվածել, փափուկ առարկաներ, որոնք կարելի է նետել և այլն: Պետք է սովորեցնել երեխաներին ուղղել իրենց գայրույթը ոչ թե մարդկանց, այլ առարկաների վրա: Անհրաժեշտ է ուշադիր հետևել, թե երեխան ինչպես է իր զգացմունքներն արտահայտում, ինչպես նաև ուշադրություն դարձնել, թե ինչ է նա հաճախ ցանկանում, ինչի պակաս է զգում, հասկանալ, թե ինչն է նրան ամենաշատը ուրախացնում և հակառակը: Յուրաքանչյուր որ ունի սիրո արտահայտման իր նախընտրելի ձևը, իր լեզուն, սակայն դա ամենևին էլ նշանակում, որ բացի դրանից ուրիշ ոչ մի լեզվով նրա հետ խոսելու կարիք չկա: Մի որ արտահայտման դրսևորումները կարևոր են յուրաքանչյուր աշակերտի համար, եթե նույնիսկ դրանք ամեն մեկի սրտում մի առաջնահերթություն ունեն: Անհրաժեշտ է շատ զրուցել աշակերտների հետ, լսել իրենց կարծիքն ու տեսակետը այս կամ այն հարցի շուրջ, փորձել միասին լուծումներ գտնել: Իհարկե, այսպիսի աշխատանքը ժամանակատար է և ջանքեր է պահանջում, սակայն դրական արդյուքը ակնհայտ կլինի: Աշակերտներին պետք է դաստիարակել սիրո մթնոլորտում: Դրա համար անհրաժեշտ է չլարվել, թողնել ամեն ինչ ընթանա իր հունով, անընդհատ նկատողություններ չանել:

Դպրոցականների գերակտիվության արդյունքում ծագած խնդիրները ավելի հեշտ և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է վաղ տարիքից աշխատել գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաների հետ՝ համագործակցելով բժշկի, հոգեբանի և ծնողի հետ: Գերակտիվության արդյունքում ծագած ցանկացած խնդիր հաղթահարելի է համապատասխան մասնագետների օգնությամբ, իսկ անուշադրության մատնելու դեպքում խնդիրները կարող են խորանալ՝ առաջացնելով նոր խնդիրներ (Кембелл, 2000):

Ուսուցչի աշխատանքը գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ

Ուսուցման և դաստիարակության գործընթացում անընդհատ առաջացող խնդիրները պահանջում են մասնագիտական նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Հասարակական կյանքի փոփոխություններով պայմանավորված՝ փոխվել է դաստիարակության նպատակը: Դպրոցներում սկսել են մշակել ուսումնադաստիարակչական աշխատանքների նոր եղանակներ: Մանկավարժները, ուսուցիչները, հոգեբանները, գիտնականները տեսական նոր վերլուծություններ և նոր մոտեցումներ են առաջարկում: Ուսուցիչները իրենց դիտարկումներն են անում և փորձում ներկայացնել խնդրի հետ առնչվող իրենց նկատառումները՝ որպես պրակտիկ ուսուցիչ: Ուսուցիչները շփվում են երեխայի հետ կյանքի ամենակարևոր ժամանակահատվածում, որի ընթացքում տեղի է ունենում անձի ձևավորումը: Այսօր ուսուցիչներին հնարավորություն է տրված ազատ աշխատել, ուսումնասիրել ու ճանաչել աշակերտներին, թույլ տալ, որ աշակերտը ինքնադրսևորվի, սովորի մտածել, եզրահանգումներ անել, բանավիճել: Դպրոցներում մանկավարժները կարող են անգեն աչքով էլ տարբերել գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականներին, քանի որ նրանք անընդհատ շարժման մեջ են: Ուսուցիչները մի շարք դժվարություններ են ունենում այդպիսի դպրոցականների հատկապես վարքի կառավարման հարցերում, քանի որ գերակտիվ երեխաները անկազմակերպ են, անուշադիր և դժվարությամբ են ենթարկվում կանոններին, շատախոսում , աղմկում , շեղվում են մի առաջադրանքից մյուսը, տեղից բղավում են, երբ հարցն իրենց չի ուղղված: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկություններին և օգտագործել նրանց ուժեղ կողմերը ուսուցման գործընթացում:

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատելիս գործում է «երեք Հ-երի անհրաժեշտություն»-ը՝ համագործակցություն ,համբերություն, հետևողականություն (Կատինյան, Օհանյան, Անտոնյան, 2017, էջ 81):

Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատող ուսուցիչը պետք է անպայման համագործակցի հոգեբանի և ծնողների հետ և մշակի հատուկ ծրագիր՝ հաշվի առնելով դպրոցականի առանձնահատկությունները:

Գերակտիվ դպրոցականների հետ աշխատելիս մանկավարժները և հոգեբանները հիմնական երեք ուղղությունների վրա են կենտրոնացնում աշխատանքները՝ ուշադրության զարգացում, վարքի և շարժումների կառավարում ,հասակակախցների և մեծահասակների հետ հաղորդակցման հմտությունների ձևավորում և զայրույթի կառավարում:

Այս հիմնական երեք ուղղություններով աշխատանքը կատարվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դպրոցականի առանձնահատկությունները:

Հետևյալ գործողությունները կօգնեն ուսուցչին գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատելիս.

- Շեղել աշակերտի ուշադրությունը իրեն նյարդայնացնող առարկայից
- Առաջարկել այլընտրանք, որը տվյալ պայմաններում ավելի հարմար է և կօգնի աշակերտին հաղթահարել գրգռվածությունը
- Հարց տալ իրեն հետաքրքրող թեմաներից
- Կտրուկ ձևով չարգելել երեխային անել ինչ-որ բան
- Չհրամայել, այլ խնդրել դադարեցնել գործողությունը
- Լսել աշակերտին, հակառակ դեպքում նա չի լսի ձեզ
- Մի քանի անգամ կրկնել միևնույն խնդրանքը
- Անցանկալի վարք դրսևորելու ժամանակ մոտեցնել նրան հայելուն, որ տեսնի իրեն
- Մի որոշ ժամանակ թողնել աշակերտին սենյակում մենակ, եթե դա անվտանգ է իր առողջության համար
- Չստիպել երեխային ներողություն խնդրել իր արարքների համար, եթե նա չի ցանկանում

Այսպիսի հմտություններին տիրապետելը կօգնի ուսուցչին հեշտությամբ հաղորդակցվել գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ և կթուլացնի լարվածությունը՝ ապահովելով արդյունավետ համագործակցություն (Завадеико, 2000, էջ 152):

Գերակտիվ դպրոցականների հետ աշխատելիս առավել արդյունավետ են անհատական պարապմունքները: Գերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտների հետ ուսումնական գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է նյութը մասնատել, հաջորդ առաջադրանքը հանձնարարել, երբ նախորդը կատարված է, դասերի ընթացքում խոսել կարճ նախադասություններով, նրանց կատարած աշխատանքները ամփոփել ստուգել: Գերակտիվ դպրոցականները ուսուցչի արագ արձագանքման կարիք ունեն և չեն կարող կենտրոնանալ, համբերել, եթե աշխատանքի արդյունքի գնահատումը երկարաձգվի: Արդյունավետ կլինի ժամացույցի կիրառումը, որպեսզի աշակերտը կարողանա զգալ ժամանակի ընթացքը: Կարելի է կիրառել ավագի ժամացույցներ, որպեսզի աշակերտները տեսնեն, թե ինչքան ժամանակ է մնացել աշխատանքի ավարտին: Երբ դպրոցականները անկառավարելի են դառնում, անհրաժեշտ է նրանց ուղղորդել ֆիզիկական որևէ գործունեության, օրինակ՝ մարմնամարզական դադար անել: Գերակտիվ դպրոցականների հետ անհրաժեշտ է «պայման կապել» ոչ թե ապագայի, այլ հենց այդ պահի վերաբերյալ. օրինակ՝ պետք չէ ասել. «Եթե այս ամիս լավ սովորես, Էրսկուրսիա կգնանք», այլ պետք է ասել. «Եթե դու փակցնես գունավոր թղթերը, կգնաս գնդակ խաղալու»: Նրանց մոտ թույլ է զարգացած ժամանակի զգացողությունը, և նրանք տասը րոպեից ավել կենտրոնանալ չեն կարող: Եթե գերակտիվ դպրոցականի մոտ նկատվում է ուշադրության կենտրոնացման

պակաս, ապա մանկավարժները պետք է աշխատեն դպրոցականի ուշադրությունը կենտրոնացնելու և պահելու ուղղությամբ: Անհրաժեշտ է աշակերտի տեսադաշտից հեռացնել ավելորդ իրերը, դիդակտիկ նյութերով չծանրաբեռնել, նախապես ընտրել օրվա պարապմունքի համապատասխան մեկ նյութ: Գերակտիվ աշակերտների խաղային, ուսումնական և աշխատանքային գործունեությունը անհրաժեշտ է կազմակերպել ոչ շատ ընդարձակ տարածքում, ապա այն աստիճանաբար ընդլայնել: Որպեսզի գերակտիվ դպրոցականները կարողանան գործունեության մի տեսակով զբաղվել տևական ժամանակ, անհրաժեշտ է սկզբում երեք րոպե հետո, ապա հինգ րոպե հետո փոխել գործունեության ձևերը, և աստիճանաբար ժամանակը երկարաձգելով, նվազեցնել գործունեության տեսակների քանակը: Ուշադրության պակաս ունեցող գերակտիվ դպրոցականների հետ աշխատելիս սկզբնական շրջանում խորհուրդ չի տրվում նրանց ընդգրկել բազմամարդ թիմերում: Սկզբում պետք է կատարել անհատական աշխատանք, այնուհետև ընդգրկել երկու, հետագայում երեք և ավել աշակերտներից բաղկացած թիմերում: Հրահանգները պետք է լինեն հակիրճ և հստակ :

Աշակերտների վարքն ու գործունեությունը կառավարելու համար անհրաժեշտ է գործողությունների հստակ պլան մշակել. բացատրել յուրաքանչյուր դեպքում դրսևորվող վարքի կանոնները և նրանց գործելակերպը: Կարևոր է աշակերտներին ցույց տալ, թե ինչպես պետք է կատարել այս կամ այն առաջադրանքը. համատեղ գործել, ձևավորել դրական սովորույթներ, աշակերտների հետ խոսել հանգիստ և բարյացակամ հնչերանգով:

Գերակտիվ երեխաների հետ աշխատանքում ուրույն տեղ են զբաղեցնում խաղային տեխնոլոգիաները: Խաղերը կարող են ուղղված լինել ազբեսիայի կառավարմանը, ինքնագնահատականի բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը և այլ բացասական դրսևորումների հաղթահարմանն ու կարգավորմանը, ինչպես նաև ուշադրության կենտրոնացմանը: Խաղային տեխնոլոգիաների արդյունավետության կարևորագույն պայմանն է խաղերի պարբերաբար կիրառումը: Խաղային տեխնոլոգիաները ուսուցիչները կարող են կիրառել դասի ժամին, դասղեկի ժամին, դաս-միջոցառումների, ինչպես նաև արտադասարանային միջոցառումների և անսահատական պարապմունքների ժամանակ: Ելնելով դասի թեմայի առանձնահատկություններից՝ կարելի է ընտրել համապատասխան խաղ: Աշխատելով S. Շևչենկոյի անվան N 42 դպրոցում որպես անգլերեն լեզվի ուսուցիչ՝ գերակտիվ երեխաների հետ աշխատանքում դաս-միջոցառումների և դասերի ընթացքում բազմիցս կիրառել ենք տարբեր նպատակային խաղեր և առաջադրանքներ: Օրինակ՝ նոր դասի բառապաշարը աշակերտները սովորել են «Կոլաժ» խաղի օգնությամբ: «Չայրոյթի աղյուսակ» խաղը կիրառվել է, երբ դասի թեման սերն էր և զգացմունքները: «Ինչո՞վ եմ սիրում զբաղվել ազատ ժամանակ» խաղը օգտագործել ենք, երբ դասի թեման առօրյայի կազմակերպման մասին էր:

«Սուր աչք»

Խաղի նպատակն է՝ կենտրոնացնել աշակերտի ուշադրությունը: Խաղում հաղթելու համար աշակերտը պետք է շատ ուշադիր լինի և կարողանա չեղվել ներկայացված իրերից: Ընտրել որևէ իր , որը աշակերտը պետք է գտնի: Թույլ տալ, որ նա կարողանա հիշել այն, հատկապես եթե նոր իր է: Աշակերտը դուրս է գալիս սենյակից: Նրա դուրս գնալուց հետո ընտրված իրը դնել աչքի համար նկատելի տեղում, բայց այնպես, որ նա միանգամից չնկատի: Մնան խաղերի ժամանակ չի կարելի իրերը սեղանի դարակում, վարագույրի կամ պահարանի ետևում թաքցնել: Աշակերտի համար տեսանելի վայրում պետք է դնել իրը, որպեսզի նա ուշադրությունը լարի ու կարողանա գտնել:

«Կոլած»

Խաղի նպատակն է՝ կառավարել ագրեսիան: Այս վարժության կատարման համար որոշ քանակությամբ թերթեր և ամսագրեր են անհրաժեշտ: Աշակերտներին առաջարկվում է կտրել դուր եկած կենդանիների, մարդկանց, առարկաների պատկերները և սոսնձել ընդհանուր էջի վրա: Հետո աշակերտները պետք է պատմեն, թե ինչու են ընտրել հենց այդ պատկերները, ինչպիսի հույզեր են դրանք առաջացնում: Այնուհետև առաջարկվում է, որ նրանք այդ պատկերների շուրջ որևէ պատմվածք հորինեն: Կարևոր պայման է, որ մյուսները շարունակեն պատմությունը:

«Չայրույթի աղյուսակ»

Չայրույթի կառավարման նպատակով կիրառվող վարժություն: Տախտակը կիսվում է երկու մասի: Աշակերտները մի կողմում գրում են զայրույթի դրական, մյուս կողմում՝ բացասական հատկությունները: Վարժությունից հետո քննարկվում է, թե երբ կարելի է արտահայտել բացասական հույզերը: Վերջում պետք է աշակերտներին բացատրել, որ վատ հույզեր չկան, պարզապես պետք է իմանալ արտահայտել զայրույթը համապատասխան ձևով:

«Ինչո՞վ եմ սիրում զբաղվել ազատ ժամանակ»

Ուշադրության կենտրոնացման նպատակով կիրառվող վարժություն:

Աշակերտները նստում են շրջանաձև: Յուրաքանչյուրը պատմում է, թե ինչով է սիրում զբաղվել ազատ ժամանակ: Այա խնդրում ենք որևէ աշակերտի կրկնել, թե իր ընկերներից ով ինչով է սիրում զբաղվել: Եթե աշակերտը դժվարանում է, ապա մյուսները պետք է օգնեն նրան: Այնուհետև պետք է քննարկել՝ արդյոք հաճելի՞ է, երբ դասընկերները հիշում են իրենց ասածները: Երեխաները եզրակացնում են, որ պետք է ուշադիր լինել շրջապատող մարդկանց նկատմամբ և լսել նրանց:

Ծնողները, մանկավարժները, հոգեբանները, որոնք աշխատում են երեխաների հետ, կարող են տարբեր խաղեր հորինել՝ ելնելով յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններից, հետաքրքրություններից և տարիքից:

Լավ կլինի զբաղեցնել աշակերտներին նմանատիպ օգտակար խաղերով, որոնք իրականում արդյունավետ վարժություններ են (Սարատիկյան, Հարությունյան, 2017, էջ 49):

Եզրակացություն

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ

● Գերակտիվության համախտանիշը արտահայտվում է դպրոցականների բարձր շարժողական ակտիվությամբ, ուշադրության կենտրոնացման պակասով և հուզական անկայունությամբ: Գերակտիվության առաջացման պատճառներից կարող են լինել պրենատալ շրջանում անբարենպաստ ներգործությունները, վաղաժամ և բարդ ծննդաբերությունը, վաղ տարիքում երեխաների հիվանդությունները, ինչպես նաև այն կարող է փոխանցվել ժառանգաբար:

● Գերակտիվության համախտանիշ ունեցող և ակտիվ երեխաների տարբերությունն կայանում է նրանում, որ գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաները չեն գիտակցում իրենց արարքների լրջությունը և չեն կարողանում կանխատեսել նրանց հետևանքները, իսկ ակտիվ երեխաները շատ հաճախ գիտակցում են, թե ինչպես իրենց պահեն այս կամ այն իրավիճակում և կարող են կառավարել իրենց:

● Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականները կարող են վարքի վերլուծության, հիշողության և ինքնակառավարման ոլորտներում խնդիրներ ունենալ: Գերակտիվ դպրոցականները հաճախ ունենում են խոսքի զարգացման, ինչպես նաև ասվածը կամ կարդացվածը արագ ըմբռնելու հետ կապված խնդիրներ: Գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաները ունենում են թույլ զարգացած մանր մոտորիկա, ինչի հետևանքով անփույթ են, հաճախ ձեռքից իրեր են գցում, պատահաբար շրջում են սեղանին դրված իրերը, չեն կարողանում մանր իրեր օգտագործել: Գերակտիվության համախտանիշը հաղթահարելի է համապատասխան մասնագետների օգնությամբ, իսկ անուշադրության մատնելու դեպքում խնդիրները կարող են խորանալ՝ առաջացնելով նոր խնդիրներ:

● Գերակտիվ դպրոցականների ուսուցման գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկություններին և օգտագործել նրա ուժեղ կողմերը: Գերակտիվության համախտանիշ ունեցող դպրոցականների հետ աշխատելիս ուսուցիչները պետք է ցուցաբերեն համբերություն և հետևողականություն:

● Գերակտիվ դպրոցականների հետ աշխատանքում ուրույն տեղ են զբաղեցնում խաղերը: Պրակտիկայում կիրառվում են տարբեր արդյունավետ խաղեր, որոնք ուղղված են ուշադրության կենտրոնացմանը, գայրույթի կառավարմանը, ինքնագնահատականի բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը և այլ հոգեհուզական բացասական դրսևորումների հաղթահարմանն ու

կարգավորմանը: Կարևորագույն պայմանը դրանք պարբերաբար կատարելն է:

• Ուսուցչի կողմից ընտրված խաղերը և առաջադրանքները պետք է համապատասխանեն դասի թեմային և աշակերտների առանձնահատկություններին: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասը պլանավորելիս նախապես նախապատրաստի նյութերը՝ կախված խաղի կամ առաջադրանքի բնույթից: Դասի նյութին համապատասխան ուսուցչի կողմից ընտրված խաղերը և առաջադրանքները արդյունավետ են ազդում աշակերտների ուշադրության կենտրոնացման և դասի նկատմամբ հետաքրքրության առաջացման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Կատինյան Վ., Օհանյան Հ., Անտոնյան Ս., Թովմասյան Լ., Ազատյան Հ., Սակարյան Թ. (2017), Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ (1), Երևան, 80 էջ:
Katinyan V., O'hanyan H., Antonyan S., T'ovmasyan L., Azatyan H., Makaryan T'. (2017), Mankavarj'hahogebanakan ajakcowt'yan d'er'nark (1), Erevan, 80 e'j: (in Armenian)
2. Սարատիկյան Լ., Հարությունյան Ս. (2017), Հոգեբանական աջակցություն հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին, Հեղինակային հրատարակություն, Երևան, 62 էջ:
Saratikyan L., Harowt'yownyan M. (2017), Hogebanakan ajakcowt'yown hogefizikakan zargacman xangarowmner ownecogh erexanerin, Heghinakayin hratarakowt'yown, Erevan, 62 e'j: (in Armenian)
3. Альтхерр М., Берг Р., Вельфль А. и др. (2004), Гиперактивные дети, Издательство: Академия, 160 с.
Al'therr M., Berg R., Vel'fl' A. i dr. (2004), Giperaktivnye deti, Izdatel'stvo: Akademija, 160 s. (in Russian)
4. Лютова Е. К., Монина Г. Б. (2001). Тренинг эффективного взаимодействия с детьми, Издательство: Речь, Санкт-Петербург, 190 с.
Ljutova E. K., Monina G. B. (2001). Trening jeffektivnogo vzaimodejstvija s det'mi, Izdatel'stvo: Rech', Sankt-Peterburg, 190 s. (in Russian)
5. Заваденко Н. Н. (2019), Гиперактивность и дефицит внимания в детском возрасте, Издательство: Юрайт, Москва, 274 с.
Zavadenko N. N. (2019), Giperaktivnost' i deficit vnimanija v detskom vozraste, Izdatel'stvo: Jurajt, Moskva, 274 s. (in Russian)

6. Шевченко Ю. С. (1997). Коррекция поведения детей с гиперактивностью и психопатоподобным синдромом, Издательство: Вита-Пресс, Москва, 52 с.
Shevchenko Ju. S. (1997). Korrekcija povedenija detej s giperaktivnost'ju i psihopatopodobnym sindromom, Izdatel'stvo: Vita-Press, Moskva, 52 s.
(in Russian)
7. Заваденко Н. Н. (2002). Факторы риска для формирования дефицита внимания и гиперактивности у детей // Мир психологии, № 1, Москва, 37 с.
Zavadenko N. N. (2002). Faktory riska dlja formirovanija deficita vnimanija i giperaktivnosti u detej // Mir psihologii, № 1, Moskva, 37 s.
(in Russian)
8. Кэмпбелл Р. (2000). Как справляться с гневом ребёнка, Издательский дом: Мирт, Москва, 192 с.
Kjempbell R. (2000). Kak spravljat'sja s gnevom rebjonka, Izdatel'skij dom: Mirt, Moskva, 192 s. (in Russian)

АННА Л. МИНАСЯН, АРУСЯК ЕГИАЗАРЯН - ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ СИНДРОМА ГИПЕРАКТИВНОСТИ ШКОЛЬНИКОВ

Ключевые слова: синдром гиперактивности, школьники, особенности развития, пути преодоления гиперактивности

Синдром гиперактивности в настоящее время является одним из самых распространенных нарушений развития школьников. В статье уделяется особое внимание особенностям развития школьников с синдромом гиперактивности, а также тем проблемам, с которыми они сталкиваются. Синдром гиперактивности влияет на поведение, концентрацию внимания и успеваемость детей. Признаками этого расстройства являются неусидчивость, чрезмерная двигательная активность, сложности с концентрацией внимания. Школьник, у которого наблюдается данный синдром, беспокоен, суетлив, не в состоянии усидеть на месте, не может сосредоточиться, вскакивает с места, ходит по классу. Негативные проявления синдрома с течением времени обостряются и могут вызвать проблемы в школе, дома, во время общения с ровесниками. В данной статье рассматриваются пути преодоления синдрома гиперактивности. Представлены задания, упражнения и игры, которые могут использоваться в учебном процессе в работе со школьниками с синдромом гиперактивности.

ANNA L. MINASYAN, ARUSYAK YEGHIAZARYAN - WAYS OF ADDRESSING STUDENTS' ATTENTION DEFICIT HYPERACTIVITY DISORDER

Keywords: *attention deficit hyperactivity disorder, students, developmental characteristics, ways of addressing hyperactivity disorder*

Attention Deficit Hyperactivity Disorder (ADHD) is one of the most common mental disorders affecting students. This article focuses on the developmental characteristics of students with ADHD and the challenges they may encounter. Students with ADHD often struggle with concentration issues, controlling impulsive behavior, and may be excessively active. Key symptoms include inattention, hyperactivity, and impulsivity, which can significantly impact their performance at school, at home, and in social interactions.

The article examines ADHD in detail and offers strategies for managing hyperactivity. It presents various techniques, tasks, exercises, and games that can be incorporated into the teaching process to enhance collaboration and cooperation between teachers and students with ADHD.

Ներկայացվել է՝ 18.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 04.05.2024 թ.